



USAID ARMENIA, SOCIAL PROTECTION SYSTEMS
STRENGTHENING PROJECT

ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների և ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության իրավական կարգավիճակների

		1.	2.	3.	4.
		Աշխատանքի պետական տեսչություն /ԱՊՏ	Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն /ԲՍՓՀ	«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն /ԶՊԾԳ	Սոցիալական ապահովության պետական ծառայություն /ՍԱՊԾ
1.	Ուն կողմից է հաստատվում կանոնադրությունը	ՀՀ կառավարություն	ՀՀ կառավարություն	ՀՀ կառավարություն	ՀՀ կառավարություն
2.	Կարգավիճակը և անվանումը	ԱՊ տեսչությունը ՀՀ ԱՍՀ նախարարության կազմում գործող ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է	ԲՍՓ գործակալությունը ՀՀ ԱՍՀ նախարարության կազմում գործող ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է	«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը ՀՀ ԱՍՀ նախարարության կազմում գործող ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է	Սոցիալական ապահովության պետական ծառայությունը ՀՀ ԱՍՀ նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է
3.	Կառավարումը և պետի նշանակման կարգը	ԱՊ տեսչությունը կառավարում է ԱՍՀ նախարարը: ԱՊ Տեսչության անմիջական ղեկավարումն	ԲՍՓ գործակալությունը կառավարում է ԱՍՀ նախարարը: ԲՍՓ գործակալության անմիջական	Զբաղվածության գործակալությունը կառավարում է ԱՍՀ նախարարը: Գործակալության	ՍԱՊ Ծառայությունը կառավարում է Ծառայության պետը, որին պաշտոնի նշանակում և

Սույն փաստաթուղթը հնարավոր է դարձել Ամերիկյան ժողովրդի աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

		իրականացնում է տեսչության պետը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն	ղեկավարումն իրականացնում է գործակալության պետը, որին, մինչև քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի անցկացման համապատասխան կարգը գործողության մեջ դնելը, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԱՍՀ նախարարը՝ ՀՀ վարչապետի համաձայնությամբ	անմիջական ղեկավարումն իրականացնում է գործակալության պետը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն:	պաշտոնից ազատում է ՀՀ Վարչապետը՝ ԱՍՀ նախարարի ներկայացմամբ:
4.	Պետի տեղակալների նշանակման կարգը	«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն	«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն:	«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն	Պետի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԱՍՀ նախարարը՝ Ծառայության պետի ներկայացմամբ:
5.	ԱՍՀ նախարարի ցուցումները և հանձնարարությունները կատարելը	ԱՊ տեսչության պետն ապահովում է ԱՍՀ նախարարի հրամանների և ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում ԱՍՀ	ԲՄՓ գործակալության պետն ապահովում է ԱՍՀ նախարարի հրամանների, ցուցումների, նախարարի համապատասխան տեղակալի ցուցումների, հանձնարարականների	Զբաղվածության գործակալության պետը ապահովում է ԱՍՀ նախարարի հրամանների և ցուցումների, ինչպես նաև ԱՍՀ նախարարի համապատասխան տեղակալի ցուցումների,	այս մասին դրույթներ նախատեսված չեն

		նախարարին	ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում ԱՍՀ նախարարին կամ նրա համապատասխան տեղակալին	հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում ԱՍՀ նախարարին կամ նրա համապատասխան տեղակալին	
6.	Մասնակցությունը քաղաքացիական հարաբերություններում	ԱՊ տեսչությանը վերապահված լիազորությունների իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերությունների նրա մասնակցությունն ապահովում է ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմը	ԲՄՓ գործակալությանը վերապահված իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմը	Ջբաղվածության գործակալությանը վերապահված իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմը	ՍԱՊ ծառայության աշխատակազմն ապահովում է Ծառայության մասնակցությունը քաղաքացիական հարաբերություններում, իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Աշխատակազմի պահպանման կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով
7.	Խորհրդակցական մարմիններ ստեղծելը	ԱՊՏ պետը ԱՍՀ նախարարին ներկայացնում է առաջարկություններ խորհրդակցական մարմիններ ստեղծելու	ԲՄՓ գործակալության պետը ԱՍՀ նախարարին ներկայացնում է առաջարկություններ խորհրդակցական	Ջբաղվածության գործակալության պետը ԱՍՀ նախարարին ներկայացնում է առաջարկություններ	ՍԱՊ Ծառայության պետն իրավունք ունի ստեղծել խորհրդակցական մարմիններ

		վերաբերյալ	մարմիններ ստեղծելու վերաբերյալ	խորհրդակցական մարմիններ ստեղծելու վերաբերյալ	
8.	Ստորաբաժանման կառուցվածքի և աշխատողների թվի հաստատումը	ԱՊՏ պետը ԱՍՀ նախարարին ներկայացնում է առաջարկություններ ԱՊ Տեսչության կառուցվածքի և աշխատողների թվի վերաբերյալ	ԲՄՓ գործակալության պետը ԱՍՀ նախարարին ներկայացնում է առաջարկություններ ԲՄՓ գործակալության կառուցվածքի, աշխատողների թվի վերաբերյալ	Զբաղվածության գործակալության պետը ԱՍՀ նախարարին ներկայացնում է առաջարկություններ գործակալության կառուցվածքի և աշխատողների թվի վերաբերյալ	ՍԱՊ Ծառայության պետը ԱՍՀ նախարարի միջոցով ՀՀ վարչապետի հաստատմանն է ներկայացնում ՍԱՊ Ծառայության աշխատակազմի կառուցվածքը և աշխատողների թիվը
9.	Իր գործունեության հետ կապված առաջարկություններ ներկայացնելը	ԱՊՏ պետն իրավունք ունի ներկայացնել առաջարկություններ ՀՀ ԱՍՀ նախարարին իր բնագավառի նպատակների ու խնդիրների վերաբերյալ	ԲՄՓ գործակալության պետն իրավունք ունի ներկայացնել առաջարկություններ ՀՀ ԱՍՀ նախարարին կամ նրա համապատասխան տեղակալին իր բնագավառի նպատակների ու խնդիրների վերաբերյալ	Գործակալության պետն իրավունք ունի ներկայացնել առաջարկություններ ՀՀ ԱՍՀ նախարարին բնակչության զբաղվածության բնագավառին վերաբերող ՀՀ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ	Իրավունք ունի մասնակցել ՍԱՊ Ծառայության գործունեությանն առնչվող օրենսդրական և այլ իրավական ակտերի մշակման աշխատանքներին և ներկայացնել առաջարկություններ ՀՀ ԱՍՀ նախարարին
10.	Հաշվետու լինելը և դրա կարգը	ԱՊ տեսչության պետը ԱՍՀ նախարարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն ԱՊ տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին	ԲՄՓ գործակալության պետը 1) հաշվետու է ՀՀ վարչապետին, ԱՍՀ նախարարին, ԲՄՓ գործակալության գործունեությունը համակարգող`	1) ԱՍՀ նախարարին կամ նրա համապատասխան տեղակալին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գործակալության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի	ՍԱՊ Ծառայության պետը հաշվետու է ՀՀ վարչապետին և ԱՍՀ նախարարին: ՍԱՊ Ծառայության պետը ԱՍՀ նախարարի միջոցով ՀՀ կառավարության

			<p>ԱՄՆ նախարարի համապատասխան տեղակալին, իսկ քաղաքացիական ծառայության մասին ՀՀ նախատեսված դեպքերում՝ նաև ԱՍՀ նախարարության աշխատակազմի ղեկավարին:</p> <p>2) ԱՍՀ նախարարին կամ նրա համապատասխան տեղակալին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն ԲՍՓ գործակալության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:</p>	<p>մասին,</p> <p>2) Ջբաղվածության գործակալությունը յուրաքանչյուր եռամսյակ ԱՍՀ նախարարին՝ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, զբաղվածության ամենամյա պետական և ՀՀ միջազգային պայմանագրերով իրականացվող ծրագրերի կատարման ընթացքի և մոնիթորինգի մասին հաշվետվություն ներկայացնելը</p>	<p>հաստատմանն է ներկայացնում Ծառայության աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվությունները</p>
11.	<p>Համագործակցությունը տեղական և արտերկրի համապատասխան կազմակերպությունների հետ</p>	<p>ԱՊ տեսչությունն իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների ու կազմակերպությունների հետ</p>	<p>համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ</p>	<p>1) ԱՍՀ նախարարի կամ նախարարի տեղակալի հանձնարարությամբ համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ և ՀՀ միջազգային պայմանագրերի շրջանակներում իրականացնում</p>	<p>Համագործակցում է արտերկրների համապատասխան կազմակերպությունների հետ, իրավունք ունի իրականացնել հանրային իրազեկման ծրագրեր</p>

				աշխատաշուկայի կարգավորման համատեղ ծրագրեր 2) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	
12.	Հանրային իրազեկման ծրագրեր իրականացնելու իրավունքը	նման իրավասություն վերապահված չէ	նման իրավասություն վերապահված չէ	նման իրավասություն վերապահված չէ	Իրավունք ունի իրականացնել հանրային իրազեկման ծրագրեր
13.	Դատարան հայց ներկայացնելու իրավունքը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրավունք ունի հայցով դատարան	նման իրավասություն վերապահված չէ	նման իրավասություն վերապահված չէ	օրենքով նախատեսված դեպքերում իրավունք ունի դիմել դատարան



Սույն համեմատական վերլուծության համար հիմք են ծառայել հետևյալ իրավական ակտերը՝

- ՀՀ կառավարության 1821-Ն որոշումը, ընդունված 14.11.2002թ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին
- ՀՀ կառավարության 1822-Ն որոշումը, ընդունված 14.11.2002թ. ՝ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կանոնադրությունը հաստատելու մասին
- ՀՀ կառավարության 1823-Ն որոշումը, ընդունված 14.11.2002թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կանոնադրությունը հաստատելու մասին
- ՀՀ կառավարության 1146-Ն որոշումը, ընդունված 29.07.2004թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության կանոնադրությունը հաստատելու մասին

Կատարված համեմատական վերլուծությունը հիմք է տալիս հանգել այն եզրակացության, որ Սոցիալական ապահովության պետական ծառայությունն ունի անկախության ավելի բարձր մակարդակ, քան ՀՀ ԱՍՀ նախարարության երեք առանձնացված ստորաբաժանումները: Բացի այդ ՀՀ կառավարության 1821-ն որոշման մեջ որպես ՀՀ ԱՍՀՆ առանձնացված ստորաբաժանումներ նշված են երեքը՝ ԱՊՏ-ն, ԲՄՓ գործակալությունը և Զբաղվածության գործակալությունը, որից պետք է ենթադրել, որ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը ՀՀ ԱՍՀՆ առանձնացված ստորաբաժանումը չի համարվում:

Հապավումներ

- ԱՍՀՆ - Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ԱՊՏ - Աշխատանքի պետական տեսչություն
- ԲՄՓ - Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն
- ԶՊԾԳ - Զբաղվածության պետական ծառայություն գործակալություն
- ՍԱՊԾ – Սոցիալական ապահովության պետական ծառայություն

Սույն փաստաթուղթը հնարավոր է դարձել Ամերիկյան ժողովրդի աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ: